ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքապետարանը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի / ծածկագիր 3.3-2/ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետը՝

ա)ենթակա և հաշվետու է աշխատակազմի քարտուղարին,

բ)երկրորդ կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի բնակչության ,հատկապես երիտասարդության ռազմա-հայրենասիրական դաստիրակությանը , աջակցում է զորակոչի,զորահավաքների,ուսումնավարժական հավաքների իրականացման աշխատանքներին, ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում է համապատասխան փաստաթղթերը,

գ)իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝.

ա) միջնակարգ կրթություն

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության , <<Համայնքային ծառայության մասին>> ,<<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, <<Ռազմական դրության մասին>>,<Զին.պարտության մասին >> ,<<Զորահավաքային նախապատրաստության մասին>>, Հայաստանի Հանրապետության Օրենքների , աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն , ինչպես նաև տրամաբանելու ,տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակաություն:

գ)տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,

դ)համակարգչով և ժամանակակից տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն :

Մրցույթին մասնակցելու համար դիմողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

ա) գրավոր դիմում (հանձնաժողովի անունով),

բ)համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարմանը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ(ների), աշխատանքային գրքույկի(վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները՝ բնօրինակի հետ միասին,

գ) հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ N98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընգրկված հիվանդություններից որևէ մեկով,

դ)հայտարարություն այն մասին , որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանապակ գործունակ,

ե)<<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի <<ե>> կետի պահանջը բավարարելու նպատակով արական սեռի անձիք ներկայացնում են զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորոկոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք,

զ) 1 լուսանկար 3x4 չափսի .

ե) անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթերով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9^{00}–ից 18^{00} -ն, բացի շաբաթ և կիրակի օրերից ՀՀ Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի շենքում (հասցե՝ գ. Խորոնք Սայաթ-Նովա 2 կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցե ՝ ք. Արմավիր Աբովյան 71, հեռ. /0237/2-07-70, 2-76-49: Ներկայացված թաստաթղթերի պատճեները ետ չեն վերադարձվում: Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ ստանալու , ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու հաամար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմ(հասցե՝ գ. Խորոնք Սայաթ-Նովա 2) , ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն վարչություն /հասցե ՝ ք. Արմավիր Աբովյան 71, հեռ. /0237/2-07-70, 2-76-49:

Մրցույթը կկայանա 2021 թվականի ապրիլի 26-ին 12:00–ին :

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2021 թվականի ապրիլի 09–ը՝ ժամը 18:00:
Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, Խորոնք համայնք. Սայաթ-Նովա 2
Էլ-փոստ՝ khoronq.armavir@mta.gov.am
Հեռախոս՝ (094) 30-47-69